

ԲՀ № 247

ք. Երևան, 22 հունիս, 2022 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սանոսյան,

«Իմ քայլը» հիմնադրամը 2022 թվականի սեպտեմբերից նախատեսում է մեկնարկել «Quanta» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական ծրագիրը:

Քվանտային ֆիզիկան հանդիսանում է ժամանակակից նանոէլեկտրոնիկայի, օպտոէլեկտրոնիկայի և համակարգչային տեխնիկայի ֆիզիկական հենքը: Նոր սերնդի սարքավորումներն աշխատում են քվանտային աշխարհի օրինաչափությունների հիման վրա, և կան լուրջ սպասելիքներ, որ այս ամենը կբերի որակական թռիչքի էլեկտրոնային սարքաշինության մեջ:

Մագիստրոսական ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ բնական գիտությունների (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա), ինչպես նաև ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառներում բակալավրի որակավորում ստացած մասնագետները, որոնք տիրապետում են ֆիզիկայի, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և անգլերենի որոշակի շեմային գիտելիքների:

Խնդրում են Ձեր աջակցությունը ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ տարածքային (մարզպետարաններ) և տեղական ինքնակառավարման (համայնքներ) մարմիններին փոխանցելու և վերջիններիս կայքէջերով տարածելու հարցում՝ մարզաբնակ մասնագետ-ուսանողներին տեղեկացնելու նպատակով:

Առդիր՝ 2 էջ

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն՝



Մխիթար Հայրապետյան

**Ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ճարտարագիտության,
ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներների
ավարտական կուրսում սովորող կամ արդեն իսկ ավարտած
երիտասարդներին**

Այսօր մենք թևակոխել ենք քվանտային տեխնոլոգիաների դար, երբ քվանտային մեխանիկան որպես գիտություն ձեռք է բերել շատ կարևոր կիրառական նշանակություն, ինչը մի քանի տասնամյակ առաջ նույնիսկ դժվար էր պատկերացնել:

Հաշվի առնելով արդի միջազգային գիտակրթական զարգացումները՝ «Իմ քայլը» հիմնադրամը իրականացնում է «Quanta» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մեկուկեսամյա մագիստրոսական կրթական ծրագիր, որի արդյունքում շրջանավարտներին շնորհվելու է մագիստրոսի կրթական աստիճան և դիպլոմ: Ուսուցումը լինելու է առկա, վերջինիս շրջանակներում մեծամասամբ դասավանդելու են արտերկրի առաջատար բուհերից հրավիրված բարձրակարգ հայազգի դասախոսներ: Յուրաքանչյուր մագիստրոս ուսման ընթացքում ունենալու է իր գիտական ղեկավարը, որի հետ իրականացնելու է գիտահետազոտական աշխատանք՝ նախապատրաստելով մագիստրոսական ատենախոսությունը, որը հետագայում կտպագրվի գիտական հոդվածի տեսքով:

Նշենք, որ ծրագրին կարող են մասնակցել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառներում առնվազն բակալավրի որակավորում ունեցող երիտասարդները:

Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում կարող են ուսումնառել ընդամենը 15 ուսանող, որոնց ուսման ամբողջ վարձավճարը փոխհատուցելու է «Իմ քայլը» հիմնադրամը՝ կրթաթոշակի տեսքով: Ծրագրի ընդունելությունը տեղի կունենա օգոստոս ամսին:

Ամառային դպրոց՝

Մագիստրոսական ծրագրի հնարավոր ուսանողներին վեր հանելու, նրանց գիտելիքներով զինելու և սեպտեմբերին մեկնարկելիք ծրագրին նախապատրաստելու նպատակով «Quanta» ծրագրի շրջանակներում հուլիսի 1-10 GreenWood հյուրանոցում անցկացվելու է ամառային դպրոց:

Ամառային դպրոցի ընթացքում դասավանդումը կազմակերպվելու է հետևյալ թեմաներով՝

- Բարձրագույն մաթեմատիկայի հատուկ հարցեր,
- Քվանտային ֆիզիկայի հիմունքներ,
- Էլեկտրոդինամիկայի հիմունքներ,
- Մաթեմատիկական մոդելավորում:

Մասնակցության պայմաններն են՝

- ✓ Լինել ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառների ավարտական կուրսում սովորող ուսանող կամ արդեն իսկ ավարտած լինել բակալավրիատը,
- ✓ Հայտերի ընդունման ժամանակ առավելությունը տրվելու է արդեն իսկ բակալավրի կրթական աստիճան ունեցող շրջանավարտներին,
- ✓ Տեղերը սահմանափակ են՝ մինչև 30 մասնակից,
- ✓ Մասնակցությունն անվճար է:

Գրանցման վեբջնաժամկետը՝ հունիսի 28, ժամը 18:00

Գրանցվել՝ <https://bit.ly/3HqRVP6>

Հավելյալ հարցերի դեպքում՝

էլ. հասցե՝ quantumphysics@mystep.foundation

Հեռ.՝ +374 44 44 01 74